

## Արտուշ Պապոյան. Քանդակագործը Գյումրիից



Միանգամայն ճիշտ են այն խոսքերը, թե Հայաստան աշխարհում ամենից դժվարը քանդակագործ լինելն է: Մի լեռնաշխարհ, որտեղ ամեն քայլափոխի բնությունն անձեռակերտ հրաշքներ է գործել, և որտեղ յուրաքանչյուր քար ունակ է խաչքար ծնելու: Այդ խոսքերը, սակայն, երիցս

ճշմարիտ են Գյումրիում, որտեղ դեռ հատու է գյումրեցի վարպետի հատիչը, գրնգուն՝ նրա մուրճի ձայնը: Բայց և հենց հայոց լեռնաշխարհում կարելի է դառնալ իսկական քանդակագործ, Գյումրվա հնօրյա վարպետների խոսքն ու զրույցը լսելով ըմբռնել քարի ոգին ու նրա հետ դաշն կնքել ողջ կյանքի ընթացքում:

Նման միջավայրում է հասակ առել և իր ստեղծագործական առաջին քայլերն արել գյումրեցի քանդակագործ Արտուշ Պապոյանը: Սովորել է ծննդավայրի Մերկուրովի անվան նկարչական դպրոցում, ապա հաճախել տեղի Գեղարվեստատեխնիկական ուսումնարան: Վերջինիս հաջորդել են ուսումնառության տարիները Երևանի Գեղարվեստաթատերական ինստիտուտի քանդակի բաժնում (Թերեզա Միրզոյանի արվեստանոց):

Համընդհանուր հետաքրքրությունը, սակայն, երիտասարդ արվեստագետի անվան շուրջ սկսվեց 1982թ. Հայաստանի Նկարչի տանը ներկայացված դիպլոմային աշխատանքից, որ պատկերում էր մեր ազգային հերոս Անդրանիկին: Վերջինիս կերպարը, որ խաղաղ վեհություն է արտահայտում, ներամփոփ է՝ ձախ ձեռքը դրած թրին, աջով բռնած ձիու սանձը: Մտախոհ է գորավարի սևեռուն հայացքը, որն ուղղված է դեպի ներքև: Կարծես հեղինակը նրան արձանացրել է հանրահայտ խոսքն արտաբերելու պահին. «Մահս չեմ հոգար, այլ գործս, որ կիսատ մնաց...»:

Քանդակագործի մյուս աշխատանքները ևս ունեն շեշտված ազգային նկարագիր: Նա ստեղծել է մեր մշակույթի երևելի գործիչների մի ողջ քանդակաշար՝ «Մխիթար Գոշ», «Նահապետ Քուչակ», «Սայաթ Նովա», «Դանիել Վարուժան», «Միամանթո» և այլն: Առանձնացնենք նրա «Լեոնիդ Ենգիբարյան» քանդակը, որ այժմ գտնվում է Հայաստանի ազգային գրադարանում: Լուսառատ սրահի աչքի ընկնող տեղում կանգնած է մնջախաղի մեծ վարպետի միաֆիգուր կոմպոզիցիան: Չի կարելի ասել, թե պարզապես կանգնած է, այլ յուրահատուկ կեցվածքով թախծոտ ժպիտ է բաժանում իր մոտով անտարբեր չանցնող ընթերցողներին:

Արտուշի քանդակները, որոնք հատկորոշվում են ավանդականի և ժամանակակից ձևակերտության նորարարական սկզբունքների համադրմամբ, ի ցույց են դնում տեղական կոլորիտի ողջ ներկայանակը: Վկայություններից մեկը «Գյումրեցիներ» եռաֆիգուր կոմպոզիցիան է, որտեղ առնչվում ենք տիպաժների հակադրության հետ: Զրուցակիցներից մեկը նիհար է ու բարձրահասակ. քաղաքացիները նրան անմիջապես կնքեցին «Պոլոզ Մուկուչ» անունով: Մյուսներն ավելի գեր են ու ցածրահասակ՝ արված գրոտեսկային շեշտվածությամբ: Դիտողն ականա մասնակից է դառնում նրանց «զրույցին», լսում գյումրեցիների կատակախառն-զարմացական խոսքը:

Քանդակային ինքնատիպ լուծման հաջողված օրինակ է նաև Մախաչկալայի ազգային թանգարանում ցուցադրվող «Աղավնիներ» աշխատանքը, որի կոմպոզիցիան ամբողջապես կառուցված է աղավնաթև ճախրանքի վրա:

«Ինքնաքանդակ-1988»ը, որ կազմված է երկու կիսադեմերի չհամընկնող մակերեսներից, արտահայտությունն է արվեստագետի բեկված հոգու և ներքին խռովքի: Չէ՞ որ այդ տարին մեր ժողովրդի համար հույսի ու հուսաբեկման տարի էր, ազգային ոգու վերազարթոնքի ու միաժամանակ կործանարար երկրաշարժի տարի:



Սույն քանդակն այդ լարված և ոչ սովորական ժամանակահատվածի գեղարվեստական լավագույն ընդհանրացումներից է:

Զարմանալի բան է. այս քանդակագործը ոչ միայն չդադարեց երկրաշարժին հաջորդած տարիներին ստեղծագործելուց, այլև հանդես բերեց ստեղծագործական նախանձելի ակտիվություն: Դա հավանաբար կարելի է բացատրել բաց թողածը լրացնելու ու գերազանցելու ցանկությամբ և, անշուշտ, իր սիրելի քաղաքը շենացնելու ու գեղեցկացնելու գովելի մտադրությամբ:

Այսօր անպատկերացնելի է Գյումրու քաղաքային միջավայրն առանց Արտուշ Պապոյանի կոթողային արձանների, որոնք զարդարում են արվեստասեր այդ քաղաքի հրապարակներն ու պուրակները: Թվենք դրանցից մի քանիսը. «Հազարան բլբուլ» (1991), Գարեգին Նժդեհի հուշարձանը (1993) համանուն հրապարակում, «Սասունցի» (2000) և «Հովհարով աղջիկը» (2001) քանդակային կոմպոզիցիաները «Նանե» հյուրանոցային համալիրի բակում, «Հայուհու» արձանը Անկախության հրապարակում (2002), «Ջիվանու ու Շերամի» քանդակը քաղաքային զբոսայգու դիմաց (2006) և, վերջապես, «Վարդանանք» արձանախումբը (2008) Գյումրու կենտրոնական՝ Վարդանանց հրապարակում: Սրանցից յուրաքանչյուրն առանձնանում է կերպարին համահունչ քանդակային ձևերի ընտրությամբ և միավորվում նույն հեղինակի գեղարվեստական լեզվի ընդհանրությամբ:




Գյումրեցիները, ի տարբերություն Երևանի կենտրոնում դրված Լենինի արձանի ու դրա հրաշալի պատվանդանի ապամոնտաժման, ավելի խելամիտ գտնվեցին՝ պահպանելով համաշխարհային պրոլետարիատի առաջնորդի արձանի պատվանդանը: Վերջինիս վրա այսօր բարձրանում է Արտուշի «Հայուհի» արձանը, որն աչքի է ընկնում ընդգծված կանացիությամբ և

իրականում Տիրամորն է մարմնավորում՝ ավետման գաղափարով:

Շարունակելով երիտասարդ տարիներին իր իսկ կերտած ազգային հերոսների պատկերաշարը՝ քանդակագործը համարձակություն ունեցավ կերտելու նաև մեծ գորավար ու հայ ազգային գաղափարախոսության ռահվիրա Գարեգին Նժդեհի հուշարձանը: Կամենալով շեշտել Լեոնահայաստանի փրկչի առաքելությունը՝ հեղինակը կերպարի դիմահայաց բարձրությամբ անցնող լեռնաշերտի միջոցով քարքարոտ ռելիեֆի պատրանք է ստեղծել:

Հատուկ պետք է անդրադառնալ «Վարդանանք» արձանախմբին, որն իր վեհությամբ և հերոսական հուժկու լիցքերի պարունակությամբ շահեկանորեն առանձնանում է հետանկախության շրջանի մոնումենտալ արձանների շարքում: Թուրն ու խաչը բռնած Վարդան գորավարն ասես երկնքից իջած լինի: Նա շրջապատված է իր զորախմբով, որի մաս են կազմում ժամանակի հայոց կաթողիկոս Հովսեփ Վայոցձորցին, մի ձեռքին սուր և մյուս ձեռքին ավետարան՝ Ղևոնդ Երեցը, զորական իշխան Արշավիր Կամսարականը և Մեծ տիկին Սահականույշը: Եթե Գրիգոր Խանջյանի «Վարդանանք» բազմաֆիգուր նկարը Ավարայրի



ճակատամարտի գեղանկարչական առայժմ չգերազանցված մեկնաբանությունն է, ապա Արտուշ Պապոյանի համանուն կոմպոզիցիան ևս անմրցելի է որպես հիշյալ պատմական թեմայի ժամանակակից քանդակային ընթերցում:



Տարիներ տևած աշխատանքից հետո Արտուշին հաջողվեց ավարտին հասցնել ևս մեկ մոնումենտալ արձանախումբ՝ նվիրված Քրիստոս Փրկչին: Այն կրում է «Եկել եմ աշխարհը փրկելու» վերնագիրը և ներկայացնում է Հիսուս

Քրիստոսի 12-մետրանոց գեղադիր կոթողը՝ առջևում ունենալով Ադամի ու Եվայի ապաշխարող կերպարները: Դասական մոտեցմամբ հասկորոշվող այս քանդակախումբը պատերազմի օրերին տեղադրվեց Սիրիայի Սիդնայա քաղաքին մերձ գտնվող Քերովբենների բարձրադիր վանքում:

Այն տեսանելի է միանգամից 4 երկրներից՝ Լիբանան, Հորդանան, Պաղեստին և Իսրայել:

Արվեստագետի վերջին շրջանի աշխատանքներից հիշատակենք նաև Քրք Քրքքոյանի արձանը Գյումրու համանուն փողոցի սկզբնամասում:

Չմոռանանք մատնանշել ևս մեկ ուշագրավ փաստ. Արտուշն ինքն է իր երեք որդիների հետ սկզբից մինչև վերջ քանդակում, մեծացնում և ձուլում իր բոլոր կոթողային աշխատանքները:

Միաժամանակ նա իր հարուստ փորձն է փոխանցում գյումրեցի ապագա քանդակագործներին՝ դասավանդելով Շիրակի պետական համալսարանի կերպարվեստի բաժնում:

Լևոն Լաճիկյան